ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ թիվ MCN 07/11/2019

ք. Երևան *07/11/2019թ.*

«Մակիչյան Քընսալթինգ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետ՝ Կատարող), ի դեմս տնօրեն Գ. Մակիչյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մի կողմից ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս գլխավոր քարտուղարին փոխարինող Համլետ Բատիկյանի, մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. **Պայմանագրի առարկան.**

1.1. Պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ իրականացնել վերջինիս պատկանող և(կամ) վերջինիս կողմից օգտագործվող ՀԾ-Հաշվապահ 7 համակարգի Աշխատավարձ ենթահամակարգի տեղեկատուների միավորում (այսուհետ՝ Ծառայություն) , իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել Ծառայությունը և վճարել դրա համար Պայմանագրով սահմանված ժամկետներում և կարգով:

1.3 Կատարողի կողմից Ծառայությունները կարող են իրականացվել վերջինիս ներկայացուցչի՝ Պատվիրատուի գործունեության վայր այցելությամբ և (կամ) հեռահար սպասարկման միջոցներով:

2. **Գործունեության իրականացման ընդհանուր պայմաններ**

2.1. Պայմանագիրն իրենից ներկայացնում է ծառայությունների մատուցման պայմանագիր և փոխարինում է Կողմերի միջև Պայմանագրի առարկային վերաբերող բոլոր նախկինում ձեռք բերված համաձայնություններին (բոլոր նման համաձայնությունները կորցնում են իրենց իրավաբանական ուժը):

2.2. Ծառայության մատուցման ընթացքում Պատվիրատուն Կատարողի համար կստեղծի համապատասխան պայմաններ, մասնավորապես՝ Ծառայության մատուցման համար անհրաժեշտ՝ Կատարողի կողմից պահանջված ձևաչափով տեղեկատվության տրամադրում, Պատվիրատուի գործունեության վայրում էլեկտրաէներգիայի առկայություն, աշխատանքային համակարգիչների տեխնիկական տվյալների և ծրագրային ապահովվածության համապատասխանություն Համակարգը արտադրողի կողմից ներկայացվող պահանջներին և այլն:

2.3. Պատվիրատուն պատասխանատու է իր կողմից տրամադրված տեղեկատվության ամբողջականության և ճշգրտության համար: Կատարողը պարտավոր չէ ստուգել Պատվիրատուի կողմից տրամադրած տեղեկատվությունը և այն համարելու է ամբողջական և ճշգրիտ: Պատվիրատուն պարտավորվում է փոխհատուցել իր կողմից ոչ ամբողջական կամ ոչ ճշգրիտ տեղեկատվության տրամադրման արդյունքում Կատարողի կողմից իրականացված լրացուցիչ(կրկնակի) աշխատանքի համար: Փոխհատուցման կարգը և չափը կհամաձայնեցվի Կողմերի միջև:

2.4. Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել, եթե Պատվիրատուի տրամադրած տեղեկատվությունը չի համապատասխանում Կատարողի պահանջած ձևաչափերին և(կամ) այդ տեղեկատվության մեջ հայտնաբերվում են այնպիսի թերություններ և(կամ) սխալներ, որոնց շտկումը կպահանջի լրացուցիչ ժամանակ և Կողմերի լրացուցիչ ջանքեր և (կամ) ի հայտ են գալիս Կատարողի կամքից չկախված այլ հանգամանքներ: Ցանկացած նման դեպքում Կատարողը պարտավորվում է գրավոր տեղեկացնել Պատվիրատուին ի հայտ եկած խոչընդոտների և Ծառայության մատուցման նոր ժամկետների վերաբերյալ: Պատվիրատուի կողմից երկու աշխատանքային օրվա ընթացքում վերոգրյալի վերաբերյալ գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում Ծառայության նոր վերջնաժամկետը համարվում է ընդունված:

2.5. Ծառայության մատուցման համար Պատվիրատուի գրասենյակ Կատարողի այցելությունների ժամերը նախապես համաձայնեցվում են Կողմերի միջև:

2.6. Կողմերի միջև փաստաթղթային և բանավոր շփման լեզուն հայերենն է, իսկ հաղորդակցման նախընտրելի եղանակը՝ էլեկտրոնային փոստը և (կամ) հեռախոսը:

2.7. Կատարողն իրավունք ունի Ծառայության մատուցմանը ներգրավված իր աշխատակիցներին փոխարինել համարժեք որակավորում ունեցող այլ աշխատակիցներով՝ նախապես այդ մասին տեղեկացնելով Պատվիրատուին:

2.8. Կողմերն իրավունք ունեն Ծառայության մատուցմանն աջակցելու նպատակով ներգրավել համապատասխան փորձագետ(ներ)՝ նախապես խորհրդակցելով մյուս Կողմի հետ: Փորձագետ(ներ)ի վարձատրության ծախսերի բաշխումը նախապես համաձայնեցվում է Կողմերի միջև:

2.9. Պատվիրատուն Պայմանագրի գործողության ժամկետում և դրա ավարտից հետո 6 (վեց) ամսվա ընթացքում առանց Կատարողի ղեկավարության նախնական գրավոր համաձայնության՝ Պատվիրատուի գտնվելու (ծառայությունների մատուցման) վայրում անմիջականորեն Ծառայություն մատուցող Կատարողի աշխատակիցներին ուղղակիորեն կամ անուղղակիորեն աշխատանքի հրավիրելու դեպքում Կատարողին վճարում է փոխհատուցում՝ Պայմանագրի (այդ թվում ավարտված) արժեքի տասնապատիկի չափով:

2.10. Կատարողն իրավունք ունի դադարեցնել Ծառայության մատուցումը, եթե Պատվիրատուի կողմից սահմանված ժամկետում՝ երկու անգամ անընդմեջ չի վճարվել Պայմանագրով սահմանված կանխավճարը:

2.11. Կատարողը չի կրի պատասխանատվություն Պատվիրատուի համակարգիչների ծրագրային ապահովումներում առաջացած խափանումների համար, եթե դրանք հետևանք են Համակարգի և Պատվիրատուի համակարգիչ(ներ)ի և(կամ) դրանց ծրագրային ապահովումների անհամատեղելիության և (կամ) անսարքության:

2.12. Կողմերից ոչ մեկն իրավունք չունի այլ անձանց զիջել Պայմանագրով նախատեսված իր իրավունքները (կամ փոխանցել պարտականությունները)՝ առանց մյուս Կողմի գրավոր համաձայնության:

2.13. Պայմանագրով սահմանված պարտավորությունը չկատարած Կողմը չի կրում պատասխանատվություն, եթե պարտավորության պատշաճ կատարումն անհնար է եղել անհաղթահարելի ուժի հետևանքով (ֆորս-մաժոր), որի մասին պետք է ծանուցել մյուս Կողմին դրա ծագման պահից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Ֆորս-մաժորային հանգամանքի ծագման դեպքում Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարման ժամկետը երկարաձգվում է ֆորս-մաժորային հանգամանքի և նրա հետևանքների տևողության ժամկետով: Ֆորս-մաժորային հանգամանքներ են համարվում պատերազմը, ջրհեղեղը, հրդեհը, երկրաշարժը և այլ տարերային աղետները, գործադուլները, ինչպես նաև այլ հանգամանքներ (գործող օրենսդրության փոփոխությունները և այլն), որոնք Կողմերից ոչ մեկը չէր կարող կանխատեսել:

2.14. Ցանկացած վեճ, որը Կողմերը չեն կարող լուծել փոխադարձ համաձայնությամբ, պետք է լուծվի ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

3. Պայմանագրի գինը և վճարումը

3.1. Պայմանագրի 1.1 կետում նշված Կատարողի կողմից մատուցվող Ծառայության արժեքը կազմում է 200,000 (Երկու հարյուր հազար) ՀՀ դրամ:

3.2. Ծառայության արժեքը նշված է առանց ավելացված արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ): Կատարողը Պայմանագրի կնքման պահին ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

3.3. Ծառայությունները ավարտելուց հետո Կատարողը դուրս է գրում հաշիվ: Դուրս գրված հաշվի վերաբերյալ առարկությունները Պատվիրատուն պարտավոր է ներկայացնել հաշվի դուրս գրումից հաշված 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում. նշված ժամկետում և գրավոր առարկություններ չներկայացնելու դեպքում Ծառայությունները համարվում են Պատվիրատուի կողմից ընդունված:

4. Գաղտնիություն

4.1. Սույն պայմանագրի շրջանակներում և դրա նպատակների իրականացման նպատակով Պատվիրատուն Կատարողին կարող է տրամադրել Գաղտնի տեղեկատվություն, իսկ Կատարողը

պարտավորվում է սույն պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում և դրա դադարեցումից հետո անժամկետ երրորդ անձանց համար չբացահայտել կամ նրանց այլ կերպ չտրամադրել Գաղտնի Տեղեկատվությունը: Սույն պայմանագրի իմաստով Գաղտնի տեղեկատվություն է համարվում անկախ ձևից Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող ցանկացած տեխնիկական, ֆինանսական, ապահովագրական, կազմակերպչական, առևտրային, բանկային և Պատվիրատուին և նրա գործունեությանը վերաբերող այլ տեղեկատվությունը, որն անհայտ է երրորդ անձանց և երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով դա ազատորեն ստանալու հնարավորություն և Կատարողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար:

4.2. Կատարողը գիտակցում և համաձայնում է, որ Պայմանագրի գործողության ընթացքում իրեն հայտնի դարձած Գաղտնի տեղեկատվության հրապարակումը, բացահայտումը կամ այլ կերպ երրորդ անձանց տրամադրումը կարող է վնաս հասցնել Պատվիրատուին, որի համար Կատարողը կկրի պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

4.3. Կատարողը պարտավորվում է չընդօրինակել և/կամ չպատճենահանել և/կամ չօգտագործել իրեն տրամադրված Գաղտնի տեղեկատվությունը, բացառությամբ սույն Պայմանագրով նախատեսված նպատակների համար և օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. Այլ դրույթներ.

5.1. Պայմանագրի 1.1 կետում նշված ծառայությունները ուժի մեջ են մտնում Պայմանագրի ստորագրման պահից և գործում են մինչև 2019թ-ի նոյեմբերի 29-ը:

5.2. Պայմանագիրը կազմված է 4 (չորս) էջից 2 (երկու) հավասարազոր օրինակներից, հայերեն լեզվով, կարգավորվում և մեկնաբանվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

5.3. Պայմանագրի ցանկացած փոփոխություններ կամ լրացումներ պետք է կատարվեն գրավոր ձևով և ստորագրվեն Կողմերի լիազոր ներկայացուցիչների կողմից:

5.4. Պայմանագիրը կարող է դադարել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նման համաձայնություն ձեռք բերելու պահին:

5.5. Պայմանագրով և օրենքով սահմանված դեպքերում Պայմանագրի վաղաժամկետ դադարեցման դեպքում Կատարողը պարտավորվում է առկայության դեպքում Պատվիրատուին վերադարձնել կանխավճարի գումարները՝ պահելով միայն դադարեցման օրվա դրությամբ մատուցված ծառայության և հաշվարկված փաստացի ծախսերի գումարը:

5.6. Կողմերը գովազդի կամ մարքեթինգի նպատակով իրավունք ունեն հրապարակել մյուս Կողմի անվանումը և ծառայությունների ընդհանուր բնույթը կամ տեսակը, ինչպես նաև այլ հանրամատչելի տվյալներ:

5.7. Պայմանագրի յուրաքանչյուր կետ կամ պայման իրենից ներկայացնում է առանձին և ինքնուրույն դրույթ: Եթե Պայմանագրի որևէ դրույթ դատական կարգով կամ այլ իրավասու մարմնի որոշմամբ ճանաչվի անվավեր կամ հարկադիր կատարման ոչ ենթակա, ապա մնացած բոլոր դրույթները կպահպանեն իրենց իրավաբանական ուժը:

6. Կողմերի իրավաբանական հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները:

Կատարող՝	Պատվիրատու՝
«Մակիչյան Քընսալթինգ» ՍՊԸ	ՀՀ Տարածքային Կառավարման և Ենթակառուցվածքների Նախարարություն
Իրավ. հասցե՝ ՀՀ, Կոտայքի մարզ, գյուղ Մայակովսկի 5փ., 37 տուն	Հասցե՝ Կառավարական տուն 3
ՀՎՀՀ 03539837	ՀՎՀՀ՝ 02815457
Հաշվարկային հաշիվ՝ 220459840017000	Հաշվարկային հաշիվ՝ 900011019073
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ Բանկ» ՓԲԸ Կոմիտաս մ/ճ	ՀՀՖՆ գանձապետական գործառնական վարչություն
Տնօրեն՝ _____ Գ. Մակիչյան	Գլխավոր բարտուղարին փոխարինող՝ _____ Հ. Բատիկյան